

Լեզվաբանություն և բանասիրություն

Սոնա Հակոբյան

*Եվրասիա միջազգային համալսարանի Օգրար լեզուների և գրականության
ամբիոնի վարիչ,
Բրյուսովի պետական համալսարան անգլերենի ամբիոնի դոկտորանտ,
Վայգեր մասնագիտական զարգացման ծրագրի կրթաթոշակառու,
Միչիգանի Համալսարան, ԱՄՆ,
բանասիրական գիտությունների թեկնածու*

ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՂԵՐՁՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Սույն հոդվածում քննական ուսումնասիրության են ենթարկվում ԱՄՆ քաղաքական խոսույթում հանդիպող փոխաբերությունները Հայոց ցեղասպանության ամենամյա ուղերձների համատեքստում: Հոդվածում անդրադարձ է կատարվում *փոխաբերության քննական ուսումնասիրություն մեթոդին* և *հասկացական/ճանաչողական փոխաբերությունների տեսությանը*: ԱՄՆ գաղափարախոսության և ցեղասպանության ճանաչման խուսանավող քաղաքականության համատեքստում: Ըստ այդմ՝ ուսումնասիրության շրջանակներում իրականացվում է նաև կորպուսային վերլուծություն՝ *Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուսի (COCA- Corpus of Contemporary American English* տվյալների հիման վրա: Այս համատեքստում լավագույնս բացահայտվում են ԱՄՆ նախագահների մտադրությունները և ցեղասպանության ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների արժևորման շարժառիթները՝ ելույթներում կիրառած փոխաբերությունների հաս-

կացական արտապատկերման շնորհիվ:

Հիմնաբառեր. քննական ուսումնասիրություն, փոխաբերություն, կորպուս, հասկացական փոխաբերություն, ԱՄՆ քաղաքական խոսույթ, փոխաբերության տարբերակում, փոխաբերության մեկնաբանում, փոխաբերության բացատրություն, իրադրային կառուցվածք գաղափարախոսություն

Ներածություն

Քաղաքական խոսույթում կիրառվող փոխաբերությունները և դրանց նշանակությունները բազմիցս քննարկվել ու քննարկվում են լեզվաբանական և քաղաքագիտական աշխատություններում: Մրանով պայմանավորված բազմաթիվ գիտական աշխատություններ և հոդվածներ են տպագրվել ու տպագրվում փոխաբերությունների ուսումնասիրության համատեքստում: Այնուամենայնիվ, սույն հոդվածում փորձ ենք արել իրականացնել քաղաքական խոսույթում օգտագործվող փոխաբերությունների քննական ուսումնասիրություն՝ հայ լեզվաբանական հետազոտությունների շրջանակ ներմուծելով Ջ. Չարթերիս Բլեյքի «Փոխաբերության քննական ուսումնասիրություն» մեթոդը, որը սերում է խոսույթի քննական ուսումնասիրությունների տեսություններից և շեշտադրում է սաև կորպուսային վերլուծություններ կատարելու առաջնահերթությունը (Charteris-Black, 2004): Ըստ «Փոխաբերության քննական ուսումնասիրության» մեթոդի ընդհանրական դիտարկման՝ փոխաբերությունը կառավարում է մտածողությունը, և շատ փոխաբերություններ պարունակում են խորքային բարոյական գնահատական: Ավելին, գոյություն ունեն այսպես կոչված *փոխաբերական հիմնաբառեր*, որոնք կարելի է պարբերաբար ստուգել տեքստերի կորպուսում, որը հետագայում ներկայացնում է քանակական տվյալներ տվյալ հիմնաբառի փոխաբերական կիրառելիության հաճախականությամբ պայմանավորված (Charteris-Black, 2004 , p. 35): Ընդլայնված կորպուսներում հանդիպող փոխաբերությունների քննական ուսումնասիրությունը կարող է հրնթացս բացահայտել այս կամ այն տեքստի հեղինակի ներհայեցականությունն ու նպատակները, որոնցով էլ կարելի է հստակ տարբերակել կոնկրետ գաղափարախոսություններ: Ըստ ամենայնի, կարող ենք ասել, որ սույն ուսումնասիրության նպատակն է բացահայտել ԱՄՆ քաղաքական խոսույթի խուսանավոր, համոզչական քաղաքականությունը՝ փոխաբերությունների կիրառության և քննական ուսումնասիրության ելքով: Հետազոտության նպատակին հասնելու համար մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները.

- Ինչպիսի փոխաբերությունների կարող ենք հանդիպել ԱՄՆ քաղաքական խոսույթում ցեղասպանության թեմայի շրջանակներում *տարբերակման*, *մեկնաբանության* և *բացատրման* հայեցակետերից:
- Ինչպիսի հասկացական փոխաբերություններով են կաղապարվում ԱՄՆ ամենամյա ուղերձները:

Հետազոտությունն իրականացվել է մի կողմից **կորպուսային մեթոդով**՝ ամերիկյան համատեքստում փոխաբերությունների հաճախական կի-

րառության մասին որոշակի **քանակական տվյալներ** ստանալու համար, մյուս կողմից հիմնականում կիրառվել են **որակական հետազոտության մեթոդներ** փոխաբերությունների նկարագրման, տարբերակման, մեկնաբանության և բացատրության հենքով: Եվ այսպես, փոխաբերությունների քննական ուսումնասիրության համար կիրառել ենք ժամանակակից *Ամերիկյան Անգլերենի Կորպուսը (COCA- Corpus of Contemporary American English)*, իսկ վերլուծության նյութը հավաքագրել ենք Ամերիկայում գործող *Հայկական ազգային ինստիտուտի կորպուսից՝ առանձնացնելով նրանում զետեղված 32 նախագահական ուղերձները* հայոց հիշատակման օրվա կապակցությամբ: Քննվող ուղերձները հասանելի են <https://www.armenian-genocide.org/index.html> վեբ-կայքում: Խորքային վերլուծության համար կիրառվել է նաև Հասկացական/ճանաչողական փոխաբերության տեսությունը (Conceptual Metaphor Theory) և «MML» (Master Metaphor List) ռեսուրսի փոխաբերությունների ցանկի տվյալները:

Տեսական ակնարկ

Գաղտնիք չէ, որ փոխաբերություններն ավանդաբար ընկալվել են որպես ոճական հնարներ և հեղինակի ոճի գունավորման լեզվական միջոցներ: Այնուամենայնիվ, ճանաչողական լեզվաբանության զարգացմանը զուգահեռ 1980-ականներին տեղի ունեցավ նաև փոխաբերությունների ուսումնասիրության և վերլուծության ճանաչողական հեղափոխություն, որը զուգորդվում է Ջորջ Լակոֆֆի և Մարկ Ջոնսոնի «Փոխաբերություններ, որոնցով մենք ապրում ենք» հայտնի աշխատությանը (Lakoff, G. & Johnson M., 1980) Փոխաբերությունների ճանաչողական ընկալումների համատեքստում փոխաբերությունն ընկալվում է որպես ճանաչողական կաղապար: Այս առումով *ճանաչողական փոխաբերության տեսության* շրջանակներում փոխաբերությունները սահմանվում են որպես «մի գաղափարի հասկացում մեկ այլ գաղափարի իմացական տիրույթի տեսակետից» (Lakoff, G. & Johnson M., 1980, p. 35): Զ. Լակոֆֆի և Մ. Ջոնսոնի տեսության հենքով կարելի է փաստել, որ «փոխաբերությունները ներթափանցում են մեր առօրյա կյանք ոչ միայն լեզվի, այլև մեր մտածողության և գործողությունների միջոցով: Ծանաչողական փոխաբերությունը հանդես գալիս որպես «ակունք և թիրախ տիրույթների արտապատկերում, իսկ այդ արտապատկերումն ինքնին հանդես է գալիս որպես այս երկու տիրույթների միջև եղած նմանությունների ամբողջություն, որտեղ աղբյուր տիրույթն այն հասկացությունն է, որից սերում են փոխաբերական արտահայտություններ, իսկ թիրախ տիրույթում հասկացություն ընկալվում է փոխաբերությունների միջոցով» (Lakoff, G. & Johnson M., 1980, p. 35):

Ըստ փոխաբերությունների ճանաչողական տեսության՝ փոխաբերությունները դասակարգվում են հետևյալ կերպ՝

- Կառուցվածքային փոխաբերություններ,
- Տարածական՝ ուղղորդիչ փոխաբերություններ,
- Գոյաբանական փոխաբերություններ, (Lakoff, G. & Johnson M., 1980, p. 25)

Լեզվի իրադրային կառուցվածքը ևս կարող է մեկնաբանվել փոխաբերական կիրառությամբ: Այս առումով Զ. Լակոֆֆը առաջ է քաշում փոխաբերության իրադրային կառուցվածք հասկացությունը (Event Structure Metaphor) և փաստում, որ իրադրային կառուցվածքի կերպային դասերը, ինչպիսիք են իրավիճակները, փոփոխությունները, գործողությունները, գործընթացները, նպատակները, պատճառներն ու միջոցներն ունեն ճանաչողական բնույթ տարածության, շարժման և ուժի հայեցակետից (Lafoff G., 2006 [1993], p. 14): Համապատասխանաբար, փոխաբերությունների իրադրային կառուցվածքը ներկայացվում է հետևյալ կերպ.

1. իրավիճակները տարածքներ են /սահմանափակ կենտրոններ տիեզերքում/,
2. փոփոխությունները շարժում են,
3. պատճառները ուժեր են,
4. գործողություններն ինքնուղորդվող շարժումներ են,
5. միջոցները ուղիներ են,
6. դժվարությունները շարժման խոչընդոտներ են,
7. արտաքին իրադարձությունները մեծ, շարժվող առարկաներ են,
8. երկարատև, նպատակաուղղված գործողությունները՝ ձամփորդություններ (Lafoff G., 2006 [1993], p. 204):

Փոխաբերությունների վերոնշյալ իրադրային դասակարգումը կարող է ենթաուրվագծվել այլ տարրերով, մասնավորապես՝ ինչպես նշում է Զ. Կովեցեսը, «փոփոխությունները շարժում են» իրադարձությունը կարող է առկայացվել հետևյալ կերպ. «փոփոխության կառավարման անկարողությունն ընկալվում է որպես շարժման կառավարման անկարողություն» և «պատահական փոփոխությունները հասկացությանացվում են որպես պատահական շարժումներ» (Kövecses, 2004 , p. 164): Ըստ ամենայնի, նմանատիպ մեկնաբանությունները թույլ են տալիս ամբողջովին ընկալել խոսույթի համատեքստը և ենթատեքստը:

Կարևորելով և շարունակելով փոխաբերությունների ճանաչողական ձևակերպումները Զ. Չարթերիս-Բլեյքը նշում է, որ վերոնշյալ ճանաչողական մոտեցումը պետք է զուգակցել գործաբանական գործոնների վերլուծության հետ, քանի որ «փոխաբերությունները միշտ օգտագործվում են կոնկրետ հաղորդակցական համատեքստում, ուստի ճանաչողական հատկանիշները չեն կարող վերացարկվել խոսույթի համոզչական գործառնությունից» (Charteris-Black, 2004 , p. 9): Նա առաջարկում է փոխաբերությունների ուսումնասիրության մի յուրօրինակ մեթոդ, որն անվանում է «փոխաբերության քննական ուսումնասիրություն», և այն ներկայանում է որպես լեզվի նկարագրության և վերլուծության մի մոտեցում, որը հանդես է գալիս **ճանաչողական լեզվաբանություն, կորպուսային լեզվաբանություն և խոսույթի քննական վերլուծություն** եռամիասնությամբ: Զ. Չարթերիս Բլեյքի պնդմամբ քննական լեզվաբանության համատեքստում ընդունված է այն կարծիքը, որ համապատասխան լեզվական միջոցներով վերլուծությունները, որոնք այս կամ այն կերպ հարում են պատմությանն ու հասարակական

համատեքստին, կարող են իրատեսորեն ներկայացնել տեքստով արտահայտված գաղափարախոսությունը, որը սովորաբար թաքնված է խոսույթի հաբիտուալիզացիայի հիմքում և մակերեսային կառույցում (Charteris-Black, 2004 , p. 31): Փիլիսոփայական գրականության մեջ նշվում է, որ «մարդկային յուրաքանչյուր գործողություն ենթարկվում է հաբիտուալիզացիայի: Հաճախակի կրկնվող մարդկային յուրաքանչյուր գործողություն դառնում է մոդել: Ըստ հաբիտուալիզացիայի՝ վերոնշյալ գործողությունները ապագայում ևս կարող են նույն մոդելով և նույն պրակտիկ ջանքերով իրականացվել» (Шюа А., 1988, p. 98): Փաստորեն, օբյեկտիվ իրականության բաղադրիչ հանդիսացող «հաբիտուալիզացիա» երևույթն իրենից ներկայացնում է դիտարկվող գործողությունների վերարտադրության այնպիսի եղանակ, որը ենթադրում է դրանց կրկնությունը (վերարտադրությունը) ապագայում՝ նախկին փորձի հիման վրա: Այս երևույթը փաստացիորեն ակնհայտ է ԱՄՆ՝ Հայոց Ցեղասպանության վերաբերյալ խոսույթում, որը բացահայտում կարող է միայն հատկորոշվել քննական ուսումնասիրությամբ:

Փոխաբերության մեկնաբանությունն առհասարակ վերաբերում է միջանձնային իմաստի բացահայտմանը, այսինքն՝ այդ մեկնաբանությամբ տարբերակվում է հասարակական հարաբերությունների տեսակը: Փոխաբերության իմաստը և բացատրությունը պայմանավորված է տեքստի իմաստով: Տեքստային իմաստ ասելով Ջ. Չարթերիզ Բլեյքը նկատի է առնում փոխաբերությունների փոխկապակցվածությունն ու հարակցությունը այն իրավիճակին, որտեղ նրանք առկայացվում են» (Charteris-Black, 2004 , p. 9): Ջ. Չարթերիզ Բլեյքը առաջարկում է փոխաբերության վերլուծության մի մոդելը, որն էլ իր հերթին սերում է Ն. Ֆերյրլոուի առաջադրած *փարբերակում, մեկնաբանում* և *բացատրություն* փուլերից (Fairlough N., 1995) և Մ. Հելլիդեի գործառական լեզվաբանության մեթոդաբանությունից (Halliday M.A. K., 1985):

Յուրաքանչյուր բառ կարող է ընկալվել փոխաբերական իմաստով, եթե համատեքստը թույլ է տալիս, և խոսողն իր ասելիքը նկատի է առնում որպես փոխաբերական միտք: Նախ՝ անհրաժեշտ է *փարբերակել* փոխաբերություն արտահայտող այսպես կոչված «թեկնածու» արտահայտությունները, որոնք նպատակահարմար է ձջգրտել լեզվական մեծ կորպուսներում: Այն բառերը, որոնք ընտրվում են փոխաբերական իմաստով դասակարգվում են որպես փոխաբերական հիմնաբառեր, և այս հիմնաբառերի գոյությունը կարող ենք չափել կորպուսում՝ քանակական ուսումնասիրության միջոցով: Հաջորդիվ, կորպուսային համատեքստերի որակական ուսումնասիրությամբ հարկ է որոշել, թե տվյալ հիմնաբառը փոխաբերական է, թե՞ գրական: Կորպուսը ներկայացնում է բավականին ընդգրկուն համատեքստ տվյալ «թեկնածու» արտահայտության համար, և միայն այդ համատեքստում է հնարավոր հասկանալ այս կամ այն եզրույթի փոխաբերական կիրառությունը: Այնուհետև, փոխաբերության *մեկնաբանման* փուլում անհրաժեշտ է հասկանալ փոխաբերությունների և այդ փոխաբերությունները սահմանող ձանաչողական և գործաբանական գործոնների միջև եղած կապը: Այս առու-

մով ենթադրվում է ճանաչողական փոխաբերությունների տարբերակում, այսինքն՝ հասկանալ, թե ինչքանով են արդեն ընտրված փոխաբերությունները նախաձեռնողական (pro-active) սոցիալականորեն կարևոր համատեքստ ներկայացնելիս: Որպես օրինակ առանձնացվում է ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՈՆ Է հասկացական փոխաբերությունը՝ անգլերենի *crusade-խաչակիր* բառի փոխաբերական և կորպուսային վերլուծության արդյունքում: Վերջին՝ *բացատրության*, փուլում անհրաժեշտ է տարբերակել փոխաբերությունների հասարակական միջնորդավորվածությունը, որով պայմանավորված է դրա կիրառությունը, և ներկայացնել այն հասարակական դերերը, որոնք դրանք կատարում են համոզման գործընթացում: Ճանաչողական փոխաբերությունների կառուցումը և կոնկրետ փոխաբերությունների գնահատումը, թերևս, կարող են նպաստել դրանց համոզիչ լինելու փաստի բացատրությանը: Այս առումով նաև առանձնացվում են փոխաբերության խոսույթային գործառնությունները, որոնք թույլ են տալիս ներկայացնել փոխաբերությունների գաղափարախոսական և հռետորաբանական հիմնավորումները: Գաղափարախոսական և հռետորաբանական հիմնավորումները կարող են ամբողջացվել և փաստացիանալ ավելի շատ լեզվական կորպուսով, քան թե վերլուծողի հենքային գիտելիքով կամ ներհայեցականությամբ (Charteris-Black, 2004, pp. 35-39): Այսինքն՝ թաքնված իմաստները և ենթատեքստերը քննական վերլուծության ընթացքում դառնում են արտակա: Փաստորեն խոսույթի քննական ուսումնասիրություն անցկացնելիս շեշտադրվում է արտակա տեքստային բովանդակության գաղափարախոսական վերլուծությունները և հասարակական գործընթացները, որոնք իրացվում են գիտակցաբար ընտրված լեզվական միջոցներով և քողարկվում են լեզվական կողավորման միջոցով: Զ. Չարթերիզ Բլեյքի մոդելում գիտակցաբար ընտրված լեզվական միջոցները հենց փոխաբերություններն են, որոնցով լավագույնս քողարկվում են հասարակական գործընթացները: Ուստի, ճանաչողական փոխաբերությունների վերլուծությամբ հնարավոր է հստակորեն տարբերակել տեքստի ներկա բովանդակությունը:

Հետազոտության արդյունքներ

Օգտվելով վերոգրյալ մեթոդաբանությունից և վերլուծություններ իրականացնելու տեսական սկզբունքներից՝ մեր հետազոտության արդյունքները առարկայացրել ենք կորպուսային տարբերակման, ճանաչողական մեկնաբանման և համատեքստային բացատրության միջոցով: Ըստ ԱՄՆ՝ Հայոց ցեղասպանության ուղերձներն ընդգրկող կորպուսի՝ ԱՄՆ ապրիլ-սասնչորսյան ուղերձներում Հայոց ցեղասպանությունը և դրա ճանաչումը վկայակոչվում են մի շարք ընդհանրական փոխաբերություններով, որոնք գրեթե ամեն տարի կրկնվում են նախագահից նախագահ և ելույթից ելույթ: Այսպես՝

Մոնա Հակոբյան

Փոխաբերություն	Հաճախականություն	Նախագահ
Marched to death	3 անգամ	Դոնալդ Թրամփ
	8 անգամ	Բարաք Օբամա
The loss of lives	8 անգամ	Ջորջ Վ. Բուշ
	8 անգամ	Բարաք Օբամա
	3 անգամ	Դոնալդ Թրամփ
Build a brighter future Build a better future	1 անգամ	Ջորջ Վ. Բուշ
	1 անգամ	Բարաք Օբամա
Build a peaceful world	1 անգամ	Ջորջ Վ. Բուշ
Rebuild bridges of understanding toward a better tomorrow	1 անգամ	Բարաք Օբամա
Building a foundation	3 անգամ	Բարաք Օբամա
Build new lives	1 անգամ	Ջորջ Վ. Բուշ
	3 անգամ	Բարաք Օբամա
Painful elements of the past	2 անգամ	Դոնալդ Թրամփ
	4 անգամ	Բարաք Օբամա
Painful history	1 անգամ	Դոնալդ Թրամփ
	2 անգամ	Բարաք Օբամա
Painful chapter of history	1 անգամ	Ջորջ Վ. Բուշ
Painful event of the past	1 անգամ	Բիլ Քլինթոն
Dark chapter of human history	1 անգամ	Դոնալդ Թրամփ
	4 անգամ	Բարաք Օբամա
	1 անգամ	Բիլ Քլինթոն
Dark days of past	5 անգամ	Բարաք Օբամա
Darkest moment of history	1 անգամ	Բիլ Քլինթոն

Գծապատկեր 1

Ընդհանուր առմամբ, ԱՄՆ քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձությունները Գծապատկեր 1-ում փոխաբերորեն որակվում են որպես պատմության *ցավոյր էջեր*, *կյանքի կորուստ*, *պայտմության մույթ օրեր*, իսկ ցեղասպանության իրադարձությունը փոխաբերորեն մեկնաբանվում է որպես *կյանքի կորուստ* և *մահվան երթ*:

Այս փոխաբերությունների տարբերակումն իրականացվել է Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուս-ի (COCA, Corpus of contemporary American English¹) ուսումնասիրությամբ: Կորպուսում **marched to (երթերով տանել)** կապակցությունը կիրառվում է ընդհանուր 530 անգամ, և փաստորեն ամերիկյան համատեքստում այն հրնթացս կարող է ընկալվել փոխա-

¹ <https://www.english-corpora.org/coca/>

բերորեն: Եթե փորձենք մեկնաբանել տվյալ փոխաբերությունը, պետք է իրականացնենք հասկացական կաղապարում՝ ճանաչողական և գործաբանական գործոնների հենքով: Հետևելով Լակոֆի, Ջոնսոնի և նրանց հետևորդների կառուցվածքային փոխաբերությունների դասակարգումներին և MML փոխաբերությունների ռեսուրսում առկա տվյալների՝ կարող ենք ասել, որ նախագահական ուղերձներում կիրառվող «1.5 million Armenians were massacred or marched to their deaths in the final days of the Ottoman Empire»– «Օսմանյան կայսրության վերջին օրերին 1,5 միլիոն հայեր կոտորվեցին կամ մահվան երթերի դատապարտվեցին» նախադասության մեջ **marched to their deaths** կառույցը կարող է առկայացվել DEATH IS DEPARTURE /ՄԱՀԸ ՄԵԿՆՈՒՄ Է/ հասկացական կառույցով, իսկ ԱՄՆ մշակութային ենթատեքստում մահը շարունակաբար ընկալվել է որպես փակ, օրգանական համակարգ, որը արմատական կորուստ չէ, այլ՝ մեկնում: They fell like wheat to the blade as they **marched to** their deaths. Dear God, they just keep coming (COCA 13, 2018): **Marched to their death** փոխաբերական կապակցությամբ արտահայտված օրինակում ակունք տիրույթը *մեկնումն* է, այսինքն՝ *երթը*, իսկ թիրախ տիրույթը՝ *մահը*, և վերջինս ընկալվում է ուղևորության և ճանապարհորդության համատեքստում: Բացի այս, ըստ Ամերիկայում գործառող Հոլոքոստի գոհերին նվիրված թանգարանի մեկնաբանության՝ **death march** արտահայտությունը սերում է համակենտրոնացման ճամբար հասկացությունից և վերաբերում է բանտարկյալների **ստիպողական երթերին երկար ուղղություններով**՝ ծանր պայմաններում²: Եթե փորձենք բացատրել սա ԱՄՆ գաղափարախոսության դիտակետից, կարող ենք ասել, որ հռետորական տեսակետից բավականին ճիշտ ընտրված փոխաբերություն է, քանի որ ուղերձների գործաբանական նպատակը՝ կարեկցանքը, ապրումակցումը և հաշտեցման քաղաքականությունը հստակ արտահայտված է հայոց հիշատակման օրվան նվիրված ուղերձներում:

Հաջորդ փոխաբերական կառույցը, որը հաճախ հանդիպում ենք ԱՄՆ՝ ցեղասպանության իրադարձություններին վերաբերող ուղերձներում **կյանքերի կորուստն** է: Ըստ *Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուս*-ի տվյալների՝ **loss of lives** արտահայտությունը հանդիպում է 77 անգամ: Ենթադրվում է, որ այն բավականին ընդունված է ամերիկյան համատեքստում և շարունակաբար զուգորդվում է մահվան փոխաբերական կիրառության հետ, որը ավելի կարեկցական երանգ է հաղորդում խոսքին: Այս առումով կարող ենք առանձնացնել հետևյալ հասկացական փոխաբերությունը TO DIE IS TO LOSE LIFE, այսինքն՝ ՄԱՀԱՆԱԿ ԵՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԿՈՐՑՆԵԼ ԿՅԱՆՔԸ: Եթե դիտարկենք հասկացական փոխաբերությունների ընդհանուր շարքը, ապա այստեղ կարող ենք ներմուծել LIFE IS A PRECIOUS POSSESSION – ԿՅԱՆՔԸ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՈՒՆԵՑՎԱԾՔ Է, իսկ դրա կորուստը՝ *մահն* է: Ակունք տիրույթում փաստորեն ունենք *կորցնել կյանք* հասկացությունը, իսկ թիրախ ոլորտում՝ *կորցնել թանկարժեք ունեցվածք*: Եթե խորությամբ ուսումնասիրենք ամերիկյան մշակութային անցքները կարող ենք

2 <https://www.encyclopedia.com/international/encyclopedias-almanacs-transcripts-and-maps/death-march>

եզրակացնել, որ ամերիկացիներն այնքան էլ կողմ չեն *մահ/մահանալ* եզրը կիրառելուն, և պատահական չէ, որ անգլերենի *to die-մահանալ*. բայը ամերիկյան համատեքստում շատ հաճախ փոխարինվում է *pass away* կամ հենց *lose life* եզրերով կամ մեղմասացություններով: Հոետորաբանական կիրառման համատեքստում սա ևս ամբողջացվում է ԱՄՆ գաղափարախոսությամբ և ունի հստակ գործարանական նպատակ:

Վկայակոչելով պատմությունը և այդ ժամանակաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները՝ ԱՄՆ քաղաքական խոսույթում 1915 թվականի իրադարձություններն ընկալվում են որպես պատմության *մութ էջեր* կամ *պայտնության ցավոյր* դեպքեր: Սույն փոխաբերությունների տարբերակման համար կրկին ուսումնասիրել ենք *Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուս*-ը: Ըստ ներկայացվող կորպուսի տվյալների՝ կարող ենք ասել, որ առկա է 60 տվյալ **painful history** արտահայտության կիրառմամբ, 20 տվյալ **painful event** արտահայտության կիրառությամբ և 29 տվյալ՝ **painful chapter** արտահայտության կիրառությամբ: Ինչ վերաբերում է **dark days** կառույցին, ապա *Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուս*-ում կա 558 տվյալի հաճախական կիրառություն: Այսպիսով, կարող ենք ևս փաստել, որ այս փոխաբերական կիրառությունները բավականին մեծ տարածում ունեն ամերիկյան համատեքստում և դրանք կարող ենք հասկացությամբ նացվել որպես՝ PAST HISTORY IS DARK –ԱՆՅՅԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՒԹ Է և PAST EVENTS of 1915 ARE PAINFUL – 1915 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՅՅԱԼ ԻՐԱԴԱՐՁՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԱՎՈՏ ԵՆ:

Գունանուններ արտապատկերող հասկացական փոխաբերությունների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **մութ**, **մուգ** և **սև** գույներով արտահայտված փոխաբերությունները հասկացությամբ նացվում են հետևյալ կերպ՝ BLACK /DARK IS NEGATIVE /BAD (Meier, et.al 2007): Շատ հաճախ հանդիպում ենք նաև SAD IS DARK հասկացական կառույցին (Palmer, S. E., Schloss, K. B., Xu, Z., & Prado-Leo 'n, L. R, 2013): Այսինքն՝ ցեղասպանության իրադարձությունները տխուր և բացասական ընկալում ունեն, որը ևս ապրումնակցման գաղափարախոսության արտահայտման հենքային տարր է: Ամերիկյան քաղաքական խոսույթում, ընդհանուր առմամբ շատ հաճախ ենք հանդիպում **dark** բառը պարունակող հասկացությոներ, որոնք հատկապես նշանավորվում են պատմության որոշակի անցքերի մասին խոսելու համատեքստում, երբ քաղաքական գործիչները պատմության տառապալից շրջանը համարում են **մութ**. դա, մասնավորապես ցայտուն արտահայտված է 19-րդ դարում ամերիկյան քաղաքացիական պատերգամին վերաբերող ուղերձներում, որն էլ հրնթացս ընկալվում է որպես բացասական գնահատողականություն: Նույն կերպ կարող է բացատրվել նաև ՑԱՎԱԼԻ բառի փոխաբերական կիրառությունը, որը, թերևս, կարող ենք մեկնաբանել իրադրային կառուցվածքով, որտեղ իրադարձության պատճառները մեկնաբանվում են փոխաբերորեն, և սերում է հետևյալ հասկացական կառույցը՝ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՆ (EMOTIONS ARE CAUSES), այսինքն 1915 թվականի իրադարձությունները պատճառում

են ցավալի զգացմունքներ, իսկ ըստ լակոֆյան իրադրային փոխաբերության մեկնաբանման ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՈՒԺԵՐ ԵՆ, որոնք էլ թերևս կադապարում են ԱՄՆ քաղաքական գործիչների գաղափարական և հզոր ելույթները:

Հաջորդիվ, ԱՄՆ նախագահական ուղերձները կադապարվում են հայ ժողովրդի ունեցած ավանդով Ամերիկայի զարգացման գործում, և մասնավորապես հաշտողական քաղաքականության համատեքստում կիրառում են *խաղաղ ու լավ* ապագայի կառուցմանը վերաբերող փոխաբերություններ: *Ժամանակակից Ամերիկյան Անգլերենի Կորպուս*-ում **build a world-կառուցել աշխարհ** փոխաբերական կառույցը ունի 89 հաճախական կիրառություն, և որը կարող ենք ներկայացնել WORLD IS A BUILDING ընդհանուր հասկացական կառույցով: Օգտագործելով building a better future, building a peaceful world, building a foundation արտահայտությունները ԱՄՆ նախագահները օգտագործում են BUILDING-ԿԱՌՈՒՅՑՑ ակունք տիրույթը՝ վկայակոչելու ազգի ձևավորումը և առաջ մղելու ԱՄՆ կայունության և հաստատականության գաղափարախոսությունը, իսկ *սպասան* թիրախավորվում է որպես հենքային կառույց:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 1915 թվականի իրադարձությունները ԱՄՆ խուսանավող քաղաքական խոսույթում առկայացվում են մի շարք փոխաբերություններով, որոնք ընդհանուր կիրառություն ունեն ամերիկյան մշակույթում և համատեքստում, և որոնք լավագույնս բացահայտում են ԱՄՆ ներհայեցականությունը Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացներում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՄՆ նախագահները քաջատեղյակ են պատմության անցքերին, դրանք համարում են *սև, մութ էջեր* և իրադարձությունների իրողությունն որակվում է որպես ազգի ցեղասպանություն: Այսինքն՝ նախագահները ճանաչում են ցեղասպանությունը՝ այդուհանդերձ խուսանավելով «ցեղասպանություն» եզրույթից: Փաստորեն, կարող ենք պնդել, որ լեզվաբանական, մասնավորապես խոսույթային վերլուծություններում, թաքնված իմաստների, խորքային կառույցների բացահայտման տեսանկյունից հենքայնորեն կարևոր են կորպուսային, ճանաչողական և մշակութային, գաղափարական և հոռետորական ռազմավարությունների ուսումնասիրությունները՝ փոխաբերությունների *դարբերակման, մեկնաբանման* և *բացատրման* հայեցակետից:

Օգտագործված գրականության ցանկ

- Шюц А. (1988). *Структура повседневного мышления.*//Социологические исследования. N2, 128-137.
- // Shyuts A., (1988) *Struktura povesednevnogo mishleniya* (The structure of Everyday Thinking) // Sociologicheskie Issledovaniya , N2 , 128-138. (In Rus.)
- Charteris-Black. (2004). *Corpus Approaches to Critical Metaphors* . New York : PALGRAVE MACMILLAN .

- Fillmore C.J. (1985). Frames and the Semantics of Understanding . *Quarterly Di Semantika* 6/2, 222–254.
- Halliday M.A. K. (1985). *Introduction to Functional Grammar* . London : Edward Arnold .
- Kövecses, Z. (2004). *Metaphor and Emotion : Language, Culture and Body in Hunam Feeling* . Cambridge : Cambridge University Press.
- Laffoff G. (2006 [1993]). Metaphor and Thought . In I. O. (Ed.), *Contemporary Theory of Metaphor* (pp. 202–253). New York : Cambridge University Press .
- Lakoff, G.. & Johnson M., (1980). *Metaphors we live by*. Chicago: University of Chicago Press.
- Palmer, S. E., Schloss, K. B., Xu, Z., & Prado-Leo 'n, L. R. (2013). Music–color associations are mediated by emotion. *Proceedings of the National Academy of Sciences*, 110, 8836–8841.

Сона Акоюн

*Заведующая кафедрой иностранных языков и литературы
Международного Университета Евразия,
докторант кафедры английского языка Государственного Университета
имени В.Я. Брюсова
Стипендиат программы профессионального роста Weiser, Университет
Мичигана, США,
кандидат филологических наук*

КРИТИЧЕСКИЙ АНАЛИЗ МЕТАФОР, ИСПОЛЬЗУЕМЫХ В АМЕРИКАНСКОМ ПОЛИТИЧЕСКОМ ДИСКУРСЕ (НА ОСНОВЕ ПОСЛАНИЙ В СВЯЗИ С ГЕНОЦИДОМ АРМЯН)

В данной статье представлен критический анализ метафор, встречающихся в американском политическом дискурсе в контексте ежегодных посланий по случаю Геноцида армян. В статье рассматриваются метод критического анализа метафоры и теория концептуальной метафоры в контексте идеологии и политики маневрирования США в вопросе признания геноцида. В связи с этим в рамках исследования также проводится корпусный анализ на основе данных современного Национального корпуса американского английского языка. В данном контексте в их речах через концептуальное представление метафор четко прослеживаются и раскрываются намерения президентов США и подоплека событий, имевших место во время геноцида.

Ключевые слова: критический анализ, метафора, корпус, концептуальная метафора, политический дискурс США, дифференциация метафоры, интерпретация метафоры, объяснение метафоры, идеология ситуационной структуры.

Sona Hakobyan

*Chair of Foreign Languages and Literature, Eurasia International University,
Doctorate at Brusov State University, Weiser Professional Development Fellow,
University of Michigan, Ph.D in Philology,*

CRITICAL DISCOURSE ANALYSIS OF METAPHOR APPLIED IN THE US POLITICAL DISCOURSE (ON PRESIDENTIAL STATEMENTS CONCERNING THE ARMENIAN GENOCIDE)

The article is a critical analysis of metaphors applied in the US political discourse in line with the Armenian Genocide. The article keenly touches upon the method of “Critical approaches to metaphor” and Conceptual Metaphor Theory (CMT) in the context of US ideology and its evasive policy on Armenian Genocide recognition. Correspondingly, the study is a corpus analysis with the data of the Corpus of Contemporary American English (COCA). Corpus studies of metaphor meticulously outline the intentions of the US presidents on the Armenian Genocide along with the motives of valuing the events of 1915 through the representation of conceptual metaphors.

Key words: critical analysis, metaphor, Conceptual Metaphor, corpus, US political discourse, metaphor identification, metaphor interpretation, metaphor explanation, event structure, ideology.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել 2020թ. ապրիլի 1-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման 2020թ. ապրիլի 14-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության 2020թ. ապրիլի 15-ին: